Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունիսի 13-ի N 622 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) սահմանվում են ռազմական արդյունաբերության արտադրանքի ազգային ստանդարտների մշակման, ընդունման և կիրառման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն են՝

1) ռազմական արտադրանք՝ արտադրանք, աշխատանք, ծառայություն, որոնք նախատեսված են ռազմական պաշտպանության կարիքների համար, այդ թվում՝ երկակի նշանակության (ռազմական և տնտեսության կարիքների համար) ապրանք.

2) ռազմական ազգային ստանդարտ՝ ռազմական արտադրանքին վերաբերող ազգային ստանդարտ.

3) ռազմական միջպետական ստանդարտ՝ ռազմական արտադրանքին վերաբերող միջպետական ստանդարտ:

3. Ռազմական արդյունաբերության բնագավառի ստանդարտացման օբյեկտներն են՝

1) ռազմական արտադրանքը, այդ թվում՝ համալիրները, նմուշները և ռազմամթերքի ու ռազմական տեխնիկայի նմուշների բաղկացուցիչ մասերը, համարող արտադրատեսակները և այն նյութական միջոցները, որոնք նախատեսված են պետության սպառազինության և այլ կարիքների բավարարման համար, ինչպես նաև աշխատանքը, ծառայությունը.

2) ռազմական արտադրանքի վաստակաթղթերի համակարգը, դասակարգումը, կոդավորումը և սպառազինման ուժերին մատակարարվող արտադրանքի հաշվառումը.

3) ռազմական արտադրանքի մշակման (արդիականացման), արտադրման, կիրառման և օգտահանման գործընթացները, այդ թվում՝ ռազմական արտադրանքի պարամետրերի չափման ու վերահսկման մեթոդները, որոնք ապահովում են հսկողության արդյունքների ճշտությունը և համադրելիությունը.

4) ռազմական արտադրանքի մշակմանը, արտադրմանը, շահագործմանը և օգտահանմանը վերաբերող կազմակերպամեթոդական կանոնները և հանձնարարականները:

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

4. Հայաստանի Հանրապետությունում ռազմական արտադրանքի, ինչպես նաև դրանց նախագծման (ներառյալ՝ հետազոտության), մշակման, արտադրության, կառուցման, մոնտաժման, կարգաբերման, շահագործման, պահման, վերանորոգման, իրացման, խոտանման և թաղման գործընթացների վերաբերյալ կիրառվում են հետևյալ ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերը՝

1) ռազմական ազգային ստանդարտները.

2) ռազմական միջպետական ստանդարտները.

3) ռազմական արտադրանքի համար միասնական պահանջներ սահմանող միջպետական և ազգային ստանդարտները.

4) ռազմական պատվեր կատարող կազմակերպության ստանդարտները.

5) ռազմական արտադրանքի ստանդարտացման կանոնները և ուղեցույցները:

5. Ռազմական ազգային ստանդարտների համար կիրառվում է ՀՍՏ Ռ դասիչը:

6. Ազգային ստանդարտներում ռազմական պահանջներ ունեցող ստանդարտները մշակվում են այն դեպքում, երբ տեխնիկական և (կամ) տնտեսական տեսանկյունից նպատակահարմար չէ առանձին արտադրանքին ներկայացվող բոլոր պահանջների մակարդակի բարձրացումը՝ մինչև ռազմական արտադրանքին ներկայացվող պահանջները:

7. Ազգային ստանդարտներում ռազմական պահանջներ ունեցող ստանդարտների համար կիրառվում է ՀՍՏ ՌԼ դասիչը:

8. Ռազմական միջպետական ստանդարտների համար կիրառվում է «ԳՕՍՏ Վ» (ГОСТ В) դասիչը: Միջպետական ստանդարտում ռազմական պահանջներ ունեցող ստանդարտի համար կիրառվում է ՎԴ ԳՕՍՏ (ВД ГОСТ) դասիչը:

9. Ռազմական արտադրանքի մշակման (արդիականացման), արտադրման, կիրառման, օգտահանման և ստանդարտացման աշխատանքների կազմակերպման ու համակարգման խնդիրների լուծման անհրաժեշտության դեպքում մշակվում և կիրառվում են նաև ռազմական արտադրանքի ստանդարտացման կանոններ և ուղեցույցներ՝ «ԿՆ Ռ» և «ՈՒՂ Ռ» դասիչներով:

10. Ռազմական ստանդարտներին և ռազմական պահանջներ ունեցող ստանդարտներին տրվում են «Գաղտնի» կամ «Հոյժ գաղտնի» որոշմամբ:

11. Ռազմական ստանդարտների տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն:

12. Ռազմական ստանդարտներով սահմանվում են ռազմական արտադրանքի ստանդարտացման բնագավառի կազմակերպամեթոդական դրույթներ, ինչպես նաև ընդհանուր տեխնիկական պահանջներ, որոնք ապահովում են արտադրանքի մշակման գործընթացում տեխնիկական միասնականությունը և իրարամերժությունը, համատեղելիությունը, արտադրանքի

արտադրությունը, շահագործումը, պահումը, նորոգումը, օգտահանումը և շրջակա միջավայրի պահպանությունը:

13. Կախված ռազմական արտադրանքի ստանդարտացման օբյեկտների առանձնահատկություններից և դրանց ներկայացվող՝ սահմանման ենթակա պահանջների բովանդակությունից՝ ռազմական արտադրանքի ստանդարտները լինում են՝

1) ռազմական արտադրանքի ստանդարտներ.

2) գործընթացների (աշխատանքների) ստանդարտներ.

3) վերահսկման (փորձարկումների, չափումների, վերլուծության) մեթոդների ստանդարտներ:

14. Ռազմական արտադրանքի ստանդարտներով սահմանվում են ռազմական արդյունաբերության համանման արտադրանքի խմբերին կամ, առանձին դեպքերում, որոշակի արտադրանքին ներկայացվող պահանջները:

15. Գործընթացների (աշխատանքների) ստանդարտներով սահմանվում են ռազմական արտադրանքի մշակման (արդիականացման), արտադրման, փոխադրման, շահագործման, նորոգման և օգտահանման տեխնոլոգիական գործընթացների ժամանակ աշխատանքի առանձին տեսակների կատարման մեթոդներին (եղանակներին, գործելակարգին, աշխատանքի առողջ և անվտանգ պայմանների ապահովման նորմերին) ներկայացվող հիմնական պահանջները:

16. Վերահսկման մեթոդների ստանդարտներով սահմանվում են ռազմական արտադրանքի արտադրման և շահագործման (օգտագործման) ժամանակ դրա փորձարկումների, չափումների, վերլուծության մեթոդները (եղանակները, ձևերը, մեթոդիկաները):

III. ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ, ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ

17. Ռազմական արտադրանքի ստանդարտների մշակումն իրականացնում է ստանդարտացման ազգային մարմինը, իսկ ընդունումը՝ ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովը: Ռազմական արդյունաբերության և պաշտպանության ոլորտի շահագրգիռ կողմերը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունն ընդգրկվում են ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովում:

18. Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի կազմը և կանոնադրությունը հաստատվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և ստանդարտացման բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի համատեղ հրամանով:

19. Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է հանձնաժողովի նախագահը: Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովը գործում է «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտներով և իր կանոնադրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

20. Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովն ընդունում է ռազմական արտադրանքի ստանդարտացման նորմատիվ փաստաթղթի նախագիծը՝ հանձնաժողովի բոլոր անդամների միջև փոխհամաձայնության ձեռքբերման միջոցով: Հանձնաժողովի կողմից ընդունված ստանդարտի նախագիծը ներկայացվում է ստանդարտացման ազգային մարմնի հաստատմանը, որը հրապարակումն գործողության մեջ է դնում ստանդարտը:

21. Ռազմական ազգային ստանդարտների կիրառումը պարտադիր է պաշտպանության կարիքների համար պետական գնումների և պետական պատվերի տեղաբաշխման գործընթացներում:

Ընդունված ռազմական ազգային ստանդարտների կիրառման պարտադիր լինելու պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից:

IV. ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՖՈՆԴԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

22. Ռազմական արտադրանքի ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի գրանցման, պահման ու դրանց մասին թույլատրելի անձանց հասանելիությունում տեղեկատվության ապահովման, ինչպես նաև ռազմական ազգային ստանդարտների մշակման նպատակով ստանդարտացման ազգային մարմինը վարում է ռազմական արտադրանքի և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ֆոնդ (այսուհետև՝ ֆոնդ): Ֆոնդում ընդգրկված բոլոր ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերը և տեղեկությունները հանդիսանում են պետական կամ ծառայողական գաղտնիքի առարկա: Այդ փաստաթղթերը և տեղեկությունները կարող են տրամադրվել և տարածվել այլ կազմակերպությունների և անձանց կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

23. Ռազմական արտադրանքի ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի հրատարակման մասին տեղեկատվությունը տրամադրում է ստանդարտացման ազգային մարմինը:

V. ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

24. Ռազմական արտադրանքի ստանդարտացման փաստաթղթերը մշակվում են՝ համաձայն ռազմական արտադրանքի ստանդարտացման աշխատանքների ամենամյա ծրագրի, որը մշակվում է ստանդարտացման ազգային մարմնի կողմից՝ ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների շահագրգիռ կողմերի առաջարկությունների հիման վրա:

25. Ռազմական ստանդարտների մշակման ամենամյա ծրագիրը կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն ներառվել պետական ծրագրում: Ռազմական արտադրանքի ստանդարտացման աշխատանքների ամենամյա ծրագիրը պետք է բովանդակի ստանդարտացման գերակա ճանաչված ոլորտները, այդ ոլորտներում նախատեսվող՝ մշակման ենթակա ստանդարտների ցանկը, ռազմական ֆոնդի վարման և պահպանման աշխատանքների նկարագիրը, ռազմական ստանդարտացման ոլորտում միջազգային և միջպետական համագործակցության աշխատանքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ